ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094103-3Բ

ք. Երևան <<31>> 01. 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտորի պաշտոնակատար՝ Ռ.Հայրապետյանի, ով գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.4.1.03.բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն, <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ում համապատասխան առաջադիմություն, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին կրթաթոշակի հատկացման գործընթացը:

2 .ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված աջակցությունը կազմում է՝ 32 890 000 (երեսուներկու միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանգիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան >> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Երևան, Նալբանդյան 128
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034148	Հ/Հ 900018001876
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Ռեկտորի պաշտոնակատար՝
---------- Ն.Հարությունյան	---------- Ռ. Հայրապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ